# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/123 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **21 օգոստոսի 2025թ.**

2025թ. օգոստոսի 11-ից 21-ը, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ դրեզինայի պահեստամասերի ձեռքբերման ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/123 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Դ. Սարգսյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլ. գնացքների շահագործման և նորոգման» ծառայության պետ, |
| Ա. Խաչատրյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլ. գնացքների շահագործման և նորոգման» ծառայության պետի շահագործման գծով տեղակալ, գլխավոր մեքենավար-հրահանգիչ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Դ. Սարգսյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, Լ. Հայրապետյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի երկու անդամները, բացակայում էր «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլ. գնացքների շահագործման և նորոգման» ծառայության ԱՊ և ԱՏ ինժեներ՝ Հ. Մովսիսյանը, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների, աճուրդի առաջարկված մեկնարկային գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընթացակարգին հայտ ներկայացված մեսնակիցների և ներկայացված հայտերը գնահատելու մասին:
3. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
4. Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ որոշելու մասին:

5. Համակարգի միջոցով գեներացվող հայտարարություն/ներ/ի, անգործության ժամանակահատված կիրառելու կամ չկիրառելու մասին:

6. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների եվ հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

7. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ, ԱՃՈՒՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ. օգոստոսի 11-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում ժամը 11:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման առարկաների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

ՀՀ դրամ

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Աճուրդի մեկնարկային գին | Մեկնարկ | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| 1 | Արգելակման կոճղակ | 1800000 | 12.08.2025 11:00 | - |
| 2 | Արգելակի գլան | 1226666.6 | 12.08.2025 11:00 | - |
| 3 | Ռեվերս | 12500000 | 12.08.2025 11:00 | - |
| 4 | Կարդանային փոխանցում | 1420000000 | 12.08.2025 11:00 | - |
| 5 | Ռեակտիվ քարշի ձող | 1420000000 | 12.08.2025 11:00 | - |

Ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՄԵՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցե, հեռ. | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1 | «Ալերտո» ՍՊԸ | ք. Երևան, Նաիրի Զարյան 74 Բ; 098282938 | info@alerto.am | 02686862 |
| 2 | «ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ | ք. Երևան, Գայի պողոտա 31/34; 098815665 | bghda88@gmail.com | 01075543 |

2025թ. օգոստոսի 12-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ համակարգի միջոցով գնահատման մեջ ներառված.

1. Հայտերը կազմվել և ներկայացվել են Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան.

2. Ներկայացված հայտերում առկա են Ընթացակարգի հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.

3. Ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ **«ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ-ի, ում** կողմից Հավելված 1-ով ներկայացված «Դիմում-Հայտարարություն» փաստաթղթում բացակայում է «Ռուսերեն անվանում» դաշտը, ինչպես նաև փաստաթուղթը հաստատված չէ էլեկտրոնային-թվային ստորագրությամբ, միաժամանակ՝ ներկայացված «Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր» փաստաթղթում 4-5-րդ չափաբաժինների մասով բացակայում է հրավերով պահանջվող տեղեկատվությունը, մասնավորապես լրացված չէ առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանման, ապրանքային նշանի, մակնիշի, արտադրողի անվանման և տեխնիկական բնութագրի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև մասնակցի կողմից ներկայացված հայտում բացակայում է Հավելված 1.3-ով ներկայացվող «Իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվություն պարունակող» փաստաթուղթը:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ. օգոստոսի 12-ին, Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների նախնական և վերջնական գնային առաջարկները.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների՝ ընտրված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

| Չ/Հ | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | Ընտրված մասնակից «X» |
| 1 | 1 | «Ալեռոո» ՍՊԸ | - | 1800000 | 20% | 2160000 | 1782000 | 20% | 2138400 | X |
| 1 | 2 | «ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ | - | 1420000000 | 20% | 1704000000 | 1420000000 | 20% | 1704000000 | |
| 2 | 1 | «Ալեռոո» ՍՊԸ | - | 1226666.6 | 20% | 1471999.92 | 1214000 | 20% | 1456800 | X |
| 2 | 2 | «ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ | - | 1420000000 | 20% | 1704000000 | 1420000000 | 20% | 1704000000 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | 1 | «Ալեռտո» ՍՊԸ | - | 12500000 | 20% | 15000000 | 12375000 | 20% | 14850000 | X |
| 3 | 2 | «ԲԱՂԴԱՍ ԱՐՅԱՆ 88» ՍՊԸ | - | 142000000 | 20% | 170400000 | 142000000 | 20% | 170400000 | |
| 4 | 1 | «ԲԱՂԴԱՍ ԱՐՅԱՆ 88» ՍՊԸ | - | 1420000000 | 20% | 1704000000 | 1420000000 | 20% | 1704000000 | X |
| 5 | 1 | «ԲԱՂԴԱՍ ԱՐՅԱՆ 88» ՍՊԸ | - | 142000000 | 20% | 170400000 | 142000000 | 20% | 170400000 | X |

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

2025թ. օգոստոսի 13-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:

2. Նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և առաջարկել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված շտկման ենթակա անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 2, դեմ՝ 0:

2025թ. օգոստոսի 15-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. **«ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ-ի** կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել է արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 2, դեմ՝ 0:

2025թ. օգոստոսի 20-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն.

2. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով,

3. **«ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ**-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջները,

4. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով **«ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ**-ի հայտը մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի ժ/պ-ին,

5. 4-5-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած, հիմք ընդունելով գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված պահանջները:

6. Համակարգի կողմից գնահատման մեջ ներառված հայտերի գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

7. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Գնահատման մեջ ներառված մասնակցի անվանումը* | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-3-րդ | «Ալեռտո» ՍՊԸ | բավարար |
| 4-5-րդ | «ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ | անբավարար |

*Գնահատվում են միայն մասնակիցների կողմից ներկայացված այն հայտերը, որոնք համակարգի կողմից ներառվել են գնահատման ենթակա հայտերի մեջ:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

## 4. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոնշյալը, 2025թ. օգոստոսի 20-ին Հանձնաժողովը որոշեց, որպես Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և այդպիսին ճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 4-րդ կետով ներկայացված Աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

## 5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԵՆԵՐԱՑՎՈՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ/ՆԵՐ/Ի, ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Լ. Հայրապետյանը ներկայացրեց գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատումների արդյունքում՝ համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ի նախագծերը:

2025թ. օգոստոսի 20-ին Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2. Հաստատել համակարգի կողմից տրամադրված հայտարարության տեքստերը:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

## 6. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց համակարգի կողմից տրամադրված պայմանագրերի նախագծերը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել համակարգի կողմից տրամադրված պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,
2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին համակարգի միջոցով ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Դ. Սարգսյան

*Հանձնաժողովի անդամ՝*

Ա. Խաչատրյան

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Լ. Հայրապետյան